

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարանի համար	
Տարեկան	12 ծր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Անկերիկայի համար	
Տարեկան	3 սրյ.
Վեցամսեայ	1.50 »

ԿԱՆԻՍԻՎ ՎՃՃՐԵԼԻ

Մանուցման տղր առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին անկերիկաներու համար 20 ժոյզ գեղջ կրչայ:

Պաշտարանի համար անգի (15 ԱՄԻԹԻՄ)

ՇԱՐՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Կանակ եւ գրամ գրկեչ
ԽՆԿԱԳՐՆԵՐԻԱՆ ԽԱՍԿԻՆ

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ լին սրուիք

Արտասահմանի համար անգի

(20 ԱՄԻԹԻՄ)

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՒԴՆԵՐԻՆ

Տարին լրանում է եւ մեր բաժանորդներին կրկու երրորդ մասը ղեռ իրենց բաժնեկիները չեն վճարած: Բաժանորդները թող հասկանան թէ այդ սեռակ անիրաւ. դիրք չէ կարելի բռնել ղեկի իրենց ստացած թերթը. թերթը կարող է պարտքով հրատարակվել միայն որոշ ժամանակի համար. իսկ եթէ այդ պարտքերը չը վճարվեն խմբագրութիւնը պարտաւոր պէտք է լինի թերթը դադարեցնել. որպէս զի ձրխակներէն պատճառով աւելի պարտքի մէջ չը խրվի:

Խմբագրութիւն

ԶՐԻՆ ՀԱՅԵՐԻՍ ՄԵՋ

Հայը իր ամէն մի բարոյական և մտաւոր պահանջին ձրի է ուղում բաւականութիւն տալ: Իր մանկան գարոց է ուղարկում և չէ ուղում վճարել, նրա դասագիրքերը ուղում է ձրի ստանալ. լրագիրը, ամսագիրը և գիրք է ստանում, և գրամ չէ ուղում վճարել: Այդ պատճառով էլ մեր գարոցները աշակերտներով լիքն են, նոյն իսկ տեղ չը լինելու չափ լիքը, բայց ապահով չեն. մեր լրագիրները և ամսագիրները համեմատաբար բաւական ընթերցողներ ունեն, բայց միշտ պարտքի տակ են, միշտ ճնշուած և միշտ անկարող ամբողջովին լուրջ և ստանալու:

Ամէն բան հային ձրի տուր, նոյնիսկ հայրենիքի ազատութիւնը և նա կը կարողանայ վայելել, օգտվել: Բայց այդ ձրի-ասէրութիւնը հային լաւ կերպով չէ պատկերացնում. փաստում է թէ նա քաղաքակրթութեան ամենաստոր աստիճանի վրայ է գտնվում, գնահատել չը գիտէ այն ամենը ինչ որ ստատարում է նրա մտաւորապէս և բարոյապէս բարձրանալուն:

Եւ իսյապէս եթէ հայի աչքում գիտութիւնը մեծ արժէք ունենար, ինչո՞ւ մեր գարոցները

ապահով չը պէտք է լինէին. ինչո՞ւ հագարարձութիւնները պարտաւորված պէտք է լինէին փոքրիկ ուսման ծարաւ ունեցող մանուկներին արձակել. եթէ հայը գրականութիւնը գնահատէր, ինչո՞ւ մեր գրական տաղանդները իրանց արհեստը պէտք է թողնէին և իրանց գոյութիւնը պահպանելու համար ուրիշ, իրենց բոլորովին անյարմար, տաղանդը և բարոյական արժանիքները մեռցնող գործերով պարտապէսին:

Ու վերջապէս եթէ հայը ազատութիւնը ստրկութիւնից գերադասէր, մեր ժողովուրդը փոխանակ տասը, 100 ատրճանակով կամ հրացանով 1000 ներով զորս կը գար թշնամու առաջ:

Այո, հայ մեծամասնութեան համար ամեն բան ձրի ստանալը յատկանիշ է. և այդ աղտոտ յատկանիշը նա արդարացնում է նրանով որ «ազգային» է կոչում: Դպրոցը ազգային է, ուրեմն մանուկը ձրի պէտք է սովորի. լրագիրը, գիրքը ազգային են, ուրեմն ձրի պէտք է կարգալ, յեղափոխութիւնը ազգային է ուրեմն ձրի պէտք է ազատվել:

Հայը կը ցանկանար որ տունն էլ, զգեստներն էլ, կերակուրն էլ, խմելիքն էլ ազգային լինէին. բայց նա իր աշխատանքից ոչ մի բան չի տար այդ ազգային բաները մշտապէս ունենալու համար:

Հայը արդէն ընկերվարական է. միայն այն տեսակ ընկերվարական, որ ինքը իր ընկերներից ամէն ինչ ստանայ ձրի. բայց ինքը ոչինչ տայ փոխարէնը: Ընկերները աշխատեն ինքը ուտի, ինքը աշխատէ միայն ինքը ուտի:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈԼԻՍ, 28 Ապրիլ 1900
(Շար. նախ. քիւն և վերջ)

Աս անվերջ ձերբակալութիւններն ու քարտերը կամայական պիտի ախլումաներու ուշադրութիւն գրաւէին. հարցումներ պիտի ըլլային: Ի՞նչ պէտք էր պատասխանել: Դժբաղդարար պատճառով մը իսկոյն ներկայացաւ. Ենի-Մահալէի մէջ ձերբակալուեցաւ հայ մը. հոս արդէն ծանօթ Ս. անունով, իբր թէ Հնչակեան վերակազմակերպիչն է իբր թէ Չ. Բ. ի ընկերը «չափիսալը» հայ մը. Ամերիկեան անցագրով: Չայն ձերբակալող խլիպալը լրտեսները շքանշան, ստակ ևւ արք գովաւորութիւն ստացան:

Ամերիկեան դեսպանատունը կրկնակի գիտումներ ըրաւ զայն թրքական բանտէն ազատելու եւ դուրս գրելու. չի տուին ըսելով որ երկու երեք տարի առաջ աս մեր հպատակն էր. այժմ ի՞նչպէս ձերբ եղած կըլլայ. երբ օրէնքով անուագն հինգ տարի պէտք է ձեր երկիրը բնակին՝ հպատակ ըլլալու համար: Մինչեւ օրս ալ խեղճ երկրասարդը թուրքերու ճանկն է եւ կըսուի թէ տանջանքի մէջ է... կը զրուցուի նաեւ որ պարոնը յայտներ է թէ կը ճանչնայ Պիւլպիւլեան լրտեսը. տափահամիտ Տիգրան Արփիարը եւ այլ ատկարգի թրքասէրներ, որոնք իսկոյն բանտն են հրաձգուել:

Բայց մէկ ծաղիկով գարուն չի գար. բռնուել է մէկ մարդ մը եւ ան ալ միայն քանի մը քիչ կուսկածեղի թուղթերով: Աս չափը չի բաւեր աս երկու տմտեան հսկայական օճրագործութիւնները արդարացնելու համար. պէտք է քիչ մը աւելի. պէտք է սուսահայ մը. պէտք է տինամիտ. սուս, խոշոր գաւազութեան հետքեր... իսկ ատ ամէնը ստեղծելը ծանր բան մը չէ:

Տուեք են լրտես նաւաստի մը ձեռքը քանի մը կապոց ու ժանակ. ետքէն ալ գաղտնի զայն ձերբակալել են:

Որո՞ւնն է, հարցուցեր են. մէկ չափիսալը հայու մը. բայց չեմ ճանչնար, անունը չեմ գիտեր վաղը կամ մէկալ օրը պիտի գոյ տանի:

Լրտեսի հետ նոր լրտես մը կը գնեն, կը զրկեն փողոցները պտտելու եւ կը հանդիպին իրենց ստած սուսահայուն: Իսկոյն կը ձերբակալեն զայն. թուրքի խելքն ալ ատշափ հաղիւ ըլլայ... հաշիւներն սխալ ըրած կըլլան: Յետոյ որ այդ հայը

նոր եկած թղթակից մը կըլլայ եւ շատ ալ միամիտ խումբներէն չըլլայ: Վրան, տունը չկը խուզարկին, ոչինչ, ոչինչ չեն գտնար: Ռուսական քոնսուլատին իսկոյն կանոն զայն կը տանի իր քովը եւ չի բանտարկել. այլ ազատ կը ձգէ հիւպատոսարանին մէջ: Քննութիւն քննութեան վրայ... երեք չորս լրտես նաւակարներ կը հաննին զիմացը... բայց կը յայտարարէ որ 300,000 հայ չարողները կրնան եւ 300 սուս վկայ բերել... խնդրը աս վիճակին է. դեռ որոշ ոչինչ յայտնի է:

Միայն թուրքերու աս նոր գիւտը անյաջող եղաւ. թէեւ գերման վարձկան թերթերուն իսկոյն հեռագրուեցաւ որ հայ ֆուլբաշիքներ ձերբակալուած են, մէկը Ամերիկեան միւսը Ռուսիոյ հպատակ:

Թուրքերը լուրեր կը տարածեն. (նոյնիսկ ստոր Օրմանեան ըսաւ մէկու մը) թէ «յեղափոխականներու» են մեծերին բռնեցինք, բայց սուսը կը պաշտպանէ... բայց բռնածին մուկ է եղեր... առիւծ են կարծեր...

Ու աս ամէնը պատրուակներ են. պէտք է ու եւ կերպով արդարացունել վերջին ամիսներու հրէշաւոր ձերբակալութիւնները:

Ասկէ քանի մը օր առաջ օտար սուսահայ մը, Փալարուան գիւղացի Յովհաննէս անուն սրկան, Բաղէշցի հայու մը հետ օդի կը իմէ եւ ետքէն ալ ձեռկուելու կելլան: Բաղէշցին աւելի ուժով ըլլալով լաւ մը կը ձեռք Յովհաննէսը: Աս ստոր էակը կը վազէ Ղալաթա-Սարայ եւ կըսէ, որ Բաղէշցին ասկէ Օսեսա եւ Պաթում քովիներու մէջ նամակ տանող բերողի պաշտօն ունի: Ալ լմնցաւ կը բռնեն եւ իսկոյն քարտ կը քնեն. թէեւ ցած հոգի Յովհաննէս Ռուսական հիւպատոսարանի ճնշուած վերթայ կըսէ որ սուս է իր ըսածները եւ լոկ կրքի արդիւնք... աղան գնաց, ո՞ւր, ոչ ոք գիտէ... մօր եւ քրոջ լացն ու աղաղակը քարեր կը հայեցնեն:

Ձերբակալեցին եւ հրեայի մը քով ծառայող տղայ մը. գրպանը մասջուց հայերէն ձեռագիր երգ մը խօթելով:

Տղան կը բողոքէ, իմ գիրս չէ. կըսէ. ես ատանկ երգ չեմ գիտեր եւ ատ տեսակ թուղթ չունիմ քովս՝ կը պտոյայ... լսող չը կայ: Պիտի քննանպատճառ, եթէ օտար հիւպատոսարանի մը մէջ ծառայող եղբոր է-ֆէնտին չօգնէ...

Անուագն քանի չափ կիներ ու օրիորդներ ձերբակալուեցան եւ աքսորուեցան: Պատճառը ոչ ոք գիտէ:

ՎԱՐԳՈ

—)(—

—)(—

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

III.

Այս վերջին տաս տարայ մէջ միակ հասարակական գործը որով բուռն կերպով հետաքրքրվում էր Կովկասի հայ երիտասարդութիւնը ճանկահայտանի ազատութեան գործն էր: Ամեն մի իր իս լիստ ուսանայի որ արագան պարտականութիւնն էր համարում օժանդակ հանդիսանալ այդ գործին, որովհետեւ համոզված էր թէ այդ գործի աջող վերջանալու մէջ է կայանում ամբողջ հայութեան փրկութիւնը: Կովկասի հայութեան ամեն մի խաւի մէջ արձագանք էր գտնում կառուց ճանկահայ եղբոր կոչը ու ամեն տեղ շտապում էին որոշ չափով օգտակար հանդիսանալ և մասամբ իրանց սրբազան պարտականութիւնը կատարել:

Յաւոր սրտի պէտք է նկատել որ այսօր այդ տրամադրութիւնը թուլացել է Կովկասում. այդ թուլանալու պատճառները շատ են. ուստի կառավարութեան հալածանքը, յեղափոխութեան ձախող պայմանները ճանկատանում, Եւրոպական պետութիւնների անտարբերութիւնը դէպի ամեն մի փոքրիկ ու ճնշվող ժողովուրդ և վերջապէս իրանց յեղափոխականների զանազան պակասութիւնները և գլխաւորապէս թուլանալը:

Ժողովուրդը, ամբողջ շուտ օգտւորվում է աջող պայմաններում և շուտով թուլանում ու ընկճվում է ձախ, անյաջող պայմաններում. յեղափոխականը պէտք է ժողովրդից տարբեր լինի իր տրամադրութիւնների, ձգտումների յարատեւութեամբ և կամքի հաստատութեամբ, որպէս զի հէնց անյաջող պայմաններում ընդունակ լինի իր անընկճելի կորովով, ընկճուած շարած ամբոխին առաջ մղել յեղափոխութեան մէջ, մինչեւ որ նորից կը սեղծվեն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆԸ

(Շար. Ասիայի քիւրդ և Վեր)

Մի կէս ժամից Արամը զգեստները փոխել, մաքուր լւացվել և նստել էր դիմաց սեղանի քով: Մենք թէյ էինք խմում և խօսում. իսկապէս նա էր խօսողը ևս լսում էր և դիտում նրա դէմքը: Շատ էր մաշվել այդ դէմքը ինը բանասային և արտօրական տարիները 34 տարեկան երիտասարդին, բառի բուն նշանակութեամբ ձերբացրել էին: Միայն նեղ, սուր և մութ կափէի գոյն աչքերը չէին կորցրել իրենց վաղեմի փայլը: Նա պատմում էր, անկապ, առանց տարեթիւների և ամիսների կարգապահութեան. աւելի այն դէպ-

աջող պայմաններ և ժողովուրդը վստահ իր յեղափոխական առաջնորդների անդրդվելու թեան վրա, կրկին առաջ կանցնի ազատութեան գործը ի կատար ածելու:

Ռուսահայութեան յեղափոխական գործը գլխաւորաբար կայանում է կուռղ տաճկահային դրամ և զէնք հայթայթելու մէջ. աւերակ և ազքատ ճանկահայտանի յոյսը նիւթականի վերաբերմամբ ամբողջովին ուսանայի վրա է: Եւ ուսանայը պարտաւոր է տաճկահային այդ յոյսը լիովին արդարացնել, որովհետեւ առաջինը կուռղ է ամբողջ հայութեան փրկութեան համար:

Ոչ մի կերպ չենք կարող սրգարանալ Կովկասյիներս մեր թուլութեան մէջ. պարտաւոր ենք դրամ զէնք հասցնել տաճկահային, այդ դրամը պէտք է ճարենք, ստեղծենք, նորն/սկսել է ուստի կառավարութիւնը այդ անմեղ գործի համար մեղ ամբողջովին արտօրէր Սիբիրի ամենահեռու անկիւնները:

Մեր երիտասարդութիւնը, յեղափոխական տարրը այսօր իր բոլոր ուժերը պէտք է լարէ բաւարարութիւն տալ տաճկահային յեղափոխութեան բոլոր նիւթական պահանջներին, եթէ չէ ուղում վատ ու քարասիրտ մակիրը արդարացի կերպով վայելել:

Ռուսահայը եւս առաւել կը բարձրանար բարոյապէս, եթէ նա կուռղ և անձնազոհ ուժեր էլ պատրաստէր իր մէջ, յարմար ժամանակին կուռի զաշտը դրկելու: Ընդհանուր ազգային փրկութեան գործի մէջ միայն մատակարարի գեր կատարելը այնքան էլ պատուաբեր չէ. նորպէս եւ կեանքի դիմաց միայն գրամ գնելը, աջնուութեան և վեհանձնութեան պակասին շան է:

ՓՈՒՇ

—(—)

ՆԱՄԱԿ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԷՆ

(Շար. Ասիայի քիւրդ և Վեր)

Յետոյ մեր «բէյզոր անմիջապէս երկու կտորիճներ ճամբայ հանեց իր փեսայ Պետոյէն օգնութիւն ինդրելու. Պետոն՝ տունելով իր հետը 50 քաջ հայ կրտսերներ և 60—70 ի չափ ալքուրտեր օգնութեան հասաւ: Առաւօտեան արեգակը դեռ նոր բարձրացած միջոցին մենք զմեզ շրջապատուած տեսնեք «Պատմանցիներով և Սէպտիմ պէյի «աշայրենբուրդ»: Ահա նորէն կարել տաքցաւ. այս անգամ վերջնականապէս համոզուեցանք թէ պիտի կտարուէնք, որովհետեւ ոչ երկնքէն և ոչ ալ վարէն յոյս մնաց. չրկար փրկարար, չրկար օգնական:

Ահա այս առթիւ ստիպուեցանք զինաթափ լինել. և յանձնուիլ ինչնց. Բայց... Մեր մէջէն յանկարծ օրիորդ մը ցատկեց և բարձր ձայնով մը կանչեց «ազրե՛րք՝ մենք պէտք չէ անձնատուր ըլլա՛նք. ու պէտք չէ ալ զինաթափ. կուռիք անվհատ կերպով, և կուռելու ենք քաջաւելի լաւ է մենք իրան յանձնուիլ այդ մոլեռանդ հրէշներուն»: Մհ... երբ լսեցինք այս աջլկան խրատաստական խօսքերը, ամենքնիս ալ մէկէն ողբուրուեցանք ու սկսեցք կրկին կուռիլ և կրկին լուծել մեր վերջնները:

Չեմ յիշեր թէ որչափ ժամանակ տեւեց այս անդիմանալի կուռը: Միայն այնչափ կը յիշեմ որ մէկէն թշնամեաց թիւը կրկնապատուած էր. բայց ոչ թէ մեր վրայ կուռային, այլ իրար խառնուած լաւ մը ալ ու ձախ հարուածելով իրարու գլուխ կը յախճախէին:

Միայն, երբեմն «սալապաթօ» ներու խապոտ ձայներ կը լսուէին ու կը յարձակէին մեր վրայ,

բայց կրկին և կրկին ետ կը մըղուէին:

Մեր ազաքներէն մէկը (լրաբերը) տեղեկութիւն տուաւ թէ ինչիտ պէյը խնդրուեց եղբուր թիւը իմացած ըլլալով՝ Լճէի բոլոր իր աւազակները հաւաքած ու եկած է Սէպտիմ Պէյին դէմ պայքար մը մղելու: «Ինչիտ պէյ Լեզ պաշտպանելու եկած էր, և ահա այս սոթիւ մեղ ձգած ու իրար անցած են:

Երկար ժամանակ ձայն չը հանեցինք մինչեւ որ մի քիչ շուշ առինք ու հանդուստացանք: Երկու աշայրենբուրդ իրար զտրուեցան ճիշդ հրէգ ժամ տուանց գագրելու: միայն թէ երկու ժամ անգամ մը 10 վայրկեան միջոցաւ իրենց ինկած դիակները կը վերցնէին և նորէն կսկսէին իրարու գլուխ ճգնել: Մենք ալ լաւ մը հանգստանալէ յետոյ հօ... հօ... հօներով մէջերնին մը տանք, բաւական միմիկները, զարկներ, մաս մը վիրասորեցինք, և մաս մը ալ սպաննեցինք, ո՛ր, թշնամու արիւնը լիմել ինչ անուշ բան է:

Կուռը այնպէս աղբորիկ մը ստաքցուցինք և հատիկ հատիկ ալ քաշուեցանք. սյո՛մ՝ երկու թշնամիներ են որ կը կուռին, կսպաննուին իրարմէ: Կառավարութիւնը տեսնելով որ խնդրը ծայրահեղութեան հասաւ, վախէն սկսաւ միջամտել, բայց անօգուտ եղաւ ջանքերը, և հրամայեց զօրքերուն որ կրակեն ու ջարդեն, քիչ մըն ալ անոնք ջարթ ու փորդ ըրին, և պակասը լրացուցին. ու ապա իսպաղեցաւ: Մենք մեր ընկածները հաւաքեցինք խաղաղութեան վերջ, որոնց մէջ կը գտնուէին 10 սպաննուած անձ և 8 վիրաւորեալ որոնք հետեւեալներն են:

Խալէ Կրպէ Մանուկեան 30 տարեկան. Լաւո Տօնօ 20. Լաւանտ Մուշէղեան 18 (բէյլի անդրանիկ որդին). Գրիգոր Գագրեան 60.

քերը որոնք իրենց արտակարգութեամբ սուր ազդեցութիւն էին գործել նրա սրտի և մտքի վրա. Ինձ զարմաց ուժ էր այն ճարպիկութիւնը, որը նա գործ էր գրել հէնց Սախալին հասնելու առաջին օրից. իր հսկայական փախուստը յաղողեցնելու համար: Եւ այդ փախուստը որ սեղի էր ունեցել ձապոնիայի, Ամերիկայի, Հնդկաստանի վրայով՝ աւելի նմանում էր Ողիսիոսի թափառումին. ու նրան իրագործելու լիովին գլուխ բերելու համար հարկաւոր էր ունենալ արտակարգ սէր դէպի հայրենիք, ձեռներեցութիւն և յանդուրժելի:

Յանկարծ Արամը բարձրաձայն ձերձաղելով ասեց.
— Բայց ամենից ուշագրաւն այս է, որ ես արդէն ալ տոված՝ ազատ երկրում պէտք է ոչնչանայի:

— Սպանիոյ և Ամերիկայի պատերազմի միջոցին էր, երբ եկայ Սան-Ֆրանչիսկօ. հէնց որ նաւից գոբու եկայ, նաւամատոյցը հաւաքված ամբողջ վրաս յարձակվեց և ուղղում էր պատառ պատառ անել ինձ. երեւակայի որ Սպանացի լրտեսի տեղ էին ընդունել ինձ. հազիւ հազ կարողացայ հասկացնել որ ես հայ եմ. Իմ բախտից այնտեղ մի հոյ կար, որը անդրիբէն լեզուով հաստատեց իմ հայ լինելը և ես զիջիս ազատեցի ազատաւոր ամերիկացիների կատաղութիւնից. այն կաշի որը ազատել էի աշխարհիս ամենազօրեղ բռնակալի ճիւղաններից...
Բայց շատ ցաւալի կը լինէր այնպէս չէ, եթէ ամերիկացիները ինձ պատառ պատառ անէին. գոնէ ինձ համար: Չէ Սուրէն, կրքերին, սահմանափակ զգացմունքներին և նիթարկվող ժողովրդները ինչքան էլ որ քաղաքակրթված լինեն, այնուամենայնիւ արեւուուշտ վայրենութեան վայրկեաններ ունեն:

Բայց շատ ցաւալի կը լինէր այնպէս չէ, եթէ ամերիկացիները ինձ պատառ պատառ անէին. գոնէ ինձ համար: Չէ Սուրէն, կրքերին, սահմանափակ զգացմունքներին և նիթարկվող ժողովրդները ինչքան էլ որ քաղաքակրթված լինեն, այնուամենայնիւ արեւուուշտ վայրենութեան վայրկեաններ ունեն:

— Դժբախտաբար այդ մի դառն և անուրանալի ճշմարտութիւն է, առարկեցի ես...
Ու լուսութիւնը տիրեց մեր մէջ, բաւական երկար. երկուսս էլ ըն-

կանք մեր մտածումների մէջ. սենեակի մէջ լսվում էր միմիայն սամավարի թշնոցը:

Այդ լուսութիւնը կրկին խզեց Արամը:

— Պոլիս էլ մտայ, երեւակայի, այնտեղ էլ քարշ տւին ոստիկանաւորն, մեծ ոստիկանաւորնը. ահագին քանակութեամբ լուսանկարներ ցայց տւին. հայ յեղափոխականներից մէկի պատկերը տեսայ, մանկական ընկերոջս, հազիւ կարողացայ ուրախութիւնս գտել. քիչ մտայ բացականչել. միայն ինքնապահպանութեան զգացմունքը զսպեց ինձ լուր Գրտես, այդ զգացմունքն էլ շատ օրեղ է մարդ պարամի մէջ. նա մարդու սրբից դուրս է վանում միւս նորաստեղծ բոլոր ազնիւ և մարդասէր զգացմունքները:

Եթէ բացականչել, պատկերը տեսնելուս համար զգացածս ուրախութիւնը յայտնէի, կորած էի Սկսվելու էին հարցաքննութիւնները, սրտեղ ես տեսել, երբ ես տեսել:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Նկատելով որ բազմաթիւ ազգայիններ կարելիութիւն չունին բոլոր հայ հրատարակութեանց միանգամայն բաժանորդագրուելով անոնց պարունակած տեղեկութեանց, թըղթակցութեանց կամ օգտաշատ գրութեանց ծանօթանալու, Շարժում որոշած է սակէ ետքը «պարբերական մամուլ» վերնագրին տակ մերթ ընդ մերթ ամփոփել բոլոր այն շահեկան գրութիւնները որոնք արտասահմանի հայ լրագրութեանց մէջ կերեւան եւ որոնք կրնան հայութեան համար հետաքրքրական ու օգտակար նկատուիլ: Այսպէսով Շարժումն ընթերցողները պիտի կարողանան մասամբ հետեւած ըլլալ արտասահմանի բոլոր անկրեւններուն մէջ հայ զաղթականութեան ապրած կեանքին եւ շարժումներուն:

Հայրենիք իր ճակատով կարեն թղթակցութեան մը մէջ, հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ Սպաղանքի կոտորածին վերաբերմամբ:

«Իրաւոր Սպաղանքէն 200 ոչխար կը քշեն կր տանին: Հայերը, երբ կը տեսնեն թէ իրենց գանդառները մտիկ չեն ընել, իրենք ալ կը յարձակին քիւրտերու վրայ եւ 200է աւելի ոչխար ալ իրենք կ'անեն: Կոիւ մըն է կը սկսի եւ մօտ 100 հոգի զոհ կերթան: Հայերէն աննշան կորուստ մը միայն: Ասոր վրայ Բաղէն զօրք կը հասնի եւ կոտորածը տեղի կ'ունենայ: Յեղափոխական փնտռելը լոկ փուճ պատրուակ մըն էր:

Մէկ երկու ամիս առաջ Մոսկուայի քանի մը քիւրտեր խորհուրդ կրնեն ինուսէն Մրլքօ Յովհաննէսի աղբիկն ու քոյրը փոխանելու: Առեւանգումը կը յաջողի, բայց ծնողք ու բարեկամ իսկոյն իմանալով՝ ետեւուն կիսան ու կազատեն առեւանգուածները: Քանի մը օր ետք, երբ Մրլքօի երկու որդիք իրենց արաքն խտրեալ ասան այդ քիւրտերէն մէկուն տան առջեւէն կանցնէին, քիւրտերը իսկոյն կը յարձակին անոնց վրայ: մէկը գնտակով մը գետին կիսնայ, միւսը 15 դաշոյնի հարուածով կը սպաննուի: Եթէ խեղճերը զէնք ու-

նենային, կրնային 20 քիւրտի ալ զէմ դնել, որովհետեւ հակայ կարիճ մարդիկ էին: Հիմայ գիւղացիները վախէն Ղարաչօյան զրացի հայ գիւղը գացեր են: Քանի մը հայեր ձերբակալուած են:

Բազմաթիւ Սեպտեմբերի եւ Հոկտեմբերի երկու թիւերը միասին հրատարակուեցան, ճոխ ու կուս պարունակութեամբ մը ոճառուած: «Իրական Նահատակներ» վերնագրով յօդուածին մէջ, Բազմաթիւ յօդուածագիր Հ. Երամեան, շատ իրաւացի կերպով կը շեշտէ այն անտարբերութիւնը որ հայ ժողովուրդը ցոյց տուած է եւ կուտայ զէպի իր մաքի մշակները, զէպի իր մամուլը ունեցած անպարտականաշուքութիւնը: Քաջաբերութեան պակասը յուսուիտ լըուծի կը մղէ անոնք՝ որոնք սահմանուած էին ազգը յառաջ մղելու իրենց հմայիչ սրինգով: Իրենց գրչի խարսզանով, իրենց մտքին գեղով ու ճաշակովը: Այդ անտարբերութեան զոհերն էին Պէշիկթաշեան եւ Դուրեան, երկու վեճակակիցները, երկու զօրազք քնարիբարդները, որոնք օրապահիկի չգործեալ մամուլի երկու շարունակ, լըուծը պատեց զիրենք, ու ալ եւս կարելի չեղաւ որ կրկին վերընձիւղ էին կամ բողբոջին: «Ի զուր արեւը կը շողար, կը գրէր Պէշիկթաշեան, գօս արմատին վրայ, անիկա ոչ ոստեր կրնձիւղէ, ոչ ծաղիկներ կը բողբոջէ»:

Նոյն լըուծով համակուած են այսօր հայ խմբագիրները, Մուրա, Արախս խափանելու վտանգին կենթարկուին, Ազգագրական հասկիւրը իրմեանի միջնորդութեան կը գիւմէ: Բայց ամէն ջանք ի զուր են, քանի որ ժողովուրդը քունի մէջ ընդարմացած կը մնայ եւ չուզեր քաջաբերել իր մտքի մշակները: Հ. Երամեան իրաւացի կերպով կը պահանջէ որ ժողովուրդը քիչ մը շարժի եւ գիտնայ արժանաւորն ու անարժանը իրարմէ զանազանել, մին վարձատրել, քաջաբերել իր վարձատրութեամբ եւ միւսը լըանել որպէս զի լոկ հացի մը համար հրապարակը անպատուող quasi-խմբագիրները ամէն ակնկալութիւն կորսնցնելով, ետ քաշուին, հրապարակը մաքրուի եւ արժանաւորները գնահատուին:

Բայց ժողովուրդէն առաջ մենք

գրականութեամբ հետաքրքրուողներս պէտք է գիտնանք արժանաւորը գնահատել ու անարժանը լըանել: Նոյն Հ. Երամեան, որ կը զայրանայ յարդի լրագրութեան մէկ քանի ներկայացուցիչներու դէմ, որովհետեւ ասոնք անձնական վէճերու հանդիսարան մը դարցուցին հայ մամուլը զօրազքաբար իր «Ազգ. Քրոնիկ»ի բաժնին մէջ, չեմ գիտեր ինչու, զմայլագին յափշտակութեամբ մը կը ջանայ գովաբանել եզրկատական հողին մէջ լոյս տեսնող խեղճ Նոր-Օր մը՝ որ ամէն բան կը յիշեցնէ մեզի, բացի նոր օրուան մը թարմութեանէ: Նախ անբարոյակամութիւն մըն է զրաքարան-ընթերցարանի մը անունով հաւաքուած գրամը գործածել թերթի մը հրատարակութեան համար: Ասկէ զատ ընթերցողը ի՞նչ կը գտնէ այդ թերթերթին մէջ, եթէ ոչ ընթերցարանին ներքին վէճերուն արձագանքը, փոխանակուած պաշտօնական նամակներուն երկարապատու պատճենները որոնք եւ ոչ մէկ կէրպով կը շահագրգռեն հայ հասարակութիւնը:

Եզրկատական հայութիւնը շատ լուրջ խնդիրներ կրնար գտնել իր շրջանակին մէջ, զբաղելու ուսումնասիրելու համար եւ ընթերցարանական անկարեւոր վէճերու հանդիսարան մը չի դարձնել իր թերթը: Երբ ժողովուրդէն արժանիքի գնահատում կը պահանջենք, առաջին օրինակը մենք պէտք է տանք, եւ լոկ խաթր համար անուշ եւ շողքորթ բառեր չի շայլենք անպէտ ու անօգուտ աշխատութիւններու:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Յ. Կ ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Ա. Տարի 60 սանթիմ, Բ. Տարի 1 Ֆրանք, Գ. Տարի 1 Ֆրանք, Գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ: Վճարումները կանխիկ: Յանձնարարութեանց համար դիմել յօրինողին սա հասցէով

Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆ

(Պուշկարիա) Վառնա

—)(—

Շէմմէ Հաճիճանեան 12 (օրիորդ մը). Վարդայի Հազարեան 16 (օրիորդ մը). Պօղոս Մանուէլեան 36. Հրաչեայ Պարսաւեան 20. Կառնկոս Քարալօթ 60 (գիւղի կզիւրը). Պոզէ (Պօղոս) Լազը Խաչատուր 19: Ասոնց մեջէն Լաւանտ, Շէմմէ Վարդայի, և Կառնկոս կուտ ժամանակ զոհուեցան: Իսկ մնացածները՝ փախուտով ժամանակ:

Վիրաւորութեան են, Մամուր (Պարոյր) Քասապեան 7 տարեկան. Լեւոն Աթաճճի 16. Շմաոն Պամուճեան 9. Օհաննէս Քարալօթեան 38. Խալօ Տօնօէնց հարսը աննա: 19:

Մնացածները անձանօթ են դեռ: Իսկ թշնամնաց թիւը՝ քիւրտերու պատմածին նայելով 200ի կը մօտենայ, որոնց մի քանի նշանաւորները հետեւեալք են.

Հասան Մահմուտ աղան (մեր ընկղէնց հովիւր) սպաննուեցաւ Լաւանտի ձեռքով:

Ալտաշան, Սէպալիմ պէկի աւազակագետը (այսինքն վաշտագետը) սպաննուեցաւ մեր գզիրի ձեռքով:

Հասան Հիւսէն աղան, Բէշիւս պէկը աւազակներու հրամանատարը, սպաննուեցաւ Սէպալիմ պէկի վաշտագետի ձեռքով: Եւ 8 հատ ալ «Պաթմանցի», անոնք ալ սպաննուեցան մեր քաջ «Խալէ կրպէտի» ձեռքով:

Հա մեր քաջած նեղու թիւնները, և հաստափոր Եզեկիէլի անտարբերութիւնը, որ չի կրքու, և կամ աւելի պարզ րսենք, չուզեց րսուքել թուրք կառավարութեան որ զուցէ ազատէր մեզի այս նեղութիւններէն:

Եւ զուցէ այնուհետեւ էլ չը կարողային անկակածել իննչու հաստատել. ու կը բացվէր ամեն բան եւ ես կրկին Սախալին էի, առանց հայրենիքիս հողը մի անգամ գոնէ համարուելու:

Բամը կարծես իր այդ վերջին բացատրութիւնով ներողութիւն էր խնդրում իր սիրած ընկերոջից, որի պատկերը տեսել եւ անտարբեր էր ձեռացել:

Այդ բոլորը լաւ Արամ, հիմա ողջ եւ առողջ վերադարձել ես, եւ ի՞նչ ես ուզում անել ի՞նչով պէտք է զբաղվես, ի՞նչպէս պէտք է անես որ կառավարութեան ձեռքը չընկնես, դրա մասին մտածենք:

Ի՞նչ եմ ուզում անել. մի՞թէ այդ պարզ չէ. նախ պէտք է գնամ հայրենիք. մինչեւ մեր թըրթի ձորը չը մտնեմ, ջուրը չը խմեմ հանդուստեղը չեմ: Յետոյ, յետոյ գործի վայրը բարեկամս. միայն հայրենիքի ջուրն ու հողը չէին որ ինձ ստիպեցին Սախալինից փախչել, հեռանալ Ամերի-

կայից կամ Հնդկաստանից. ես արեւտ ունէի ձեռքս, եւ հետաքրքիր նիւթեր արեւստիս համար. կարող էի կանոնաւոր կերպով դրամ շահել, եւ իմ այդ երկար ճանապարհորդութեանս ծախքը իմ արեւստովս հայթայթեցի: Ինձ հրապուրում էր գործը, հայրենիքի փրկութեան գործը, որից ինձ այնքան անխղճօրէն եւ բռնութեամբ բաժանեցին հիւսիսային արջի ձագուկները:

Բայց ու այժմ դու հանգստանալու պէտք ունիս. ինք երկար տարիներ լայված վիճակի մէջ ես եղել, ֆիզիքովս բաւական թուլացել եմ. ու ժերդ վատնվել եմ անպարար, ու ժերդ լարուած վիճակի թագաւոր է ֆիզիքական թուլութիւնը եւ այսօր երբ գու հասել ես սեւեռուց զաղու-փարիկ իրադրման. երբ հայրենիք ես հասել, այդ ֆիզիքական թուլութիւնը պէտք է երեւան գայ. դու մի առ ժամանակ անկարող կը լինես յեզ վիճակում արտակարգ պայմաններին զէմ մաքառելու եւ կը խորտակվես:

Բան չունես, կը խորտակվեմ. ինչու եմ խորտակվում. չէ որ հիմա էլ ունեմ մի աւելի մեծ սեւեռուց գողափար, գործը. չէ որ հիմա էլ կը լարվեն նկարիչներս. թո՛ղ լարվեն, թո՛ղ իմ մէջ գտնված կենսական նիւթը ու ժը վտովի այդ նկարիչները միշտ լարված պահելու համար. նոյն իսկ կարծ ժամանակի համար:

Ես սքանչուցած նայում էի այդ կորովի իրիտասարդի վրա. որի հոգու մեծութիւնը, երկաթի կամքը կեցողունացել էին նրա փաթրիկ ու փայլուն աչքերի մէջ:

Անա գողափարի մարդը, անկանքի հերոսը, որ իր բոլոր առաւելութիւնները ձեռք էր բերել կեանքի բովի մէջ, որ իր կեանքում երբէք խոշոր խոշոր ծրագիրները մասին ճատեր չէր գրել ու արտասանել, որը ունէր հասարակ ժողովուրդի մարդի պակասութիւնները, զերծ էր սովորական յիվանդ գործիչի քաղաքակիրթ բարեմասնութիւններից, եւ ինքը իր մէջը ստեղծել էր անաս-

ման սէր դէպի հայրենիք հակայական կամք եւ անպատմիկ սուկուտութիւն...

Եւ իմ այդ հրճուանքը չը կարողացայ զսպել. տեղիցս վեր թռայ, գրկեցի Արամին ու անյազօրէն սկսեցի համարել նրա փայլուն աչքերը:

Ի՞նչ է, գովեցի՞ր Սուրեն, թո՛ղ խեղդում ես ինձ:

Չեմ խեղդում. ընկճում եմ առջեւդ, ցանկանում եմ միշտ այսպէս մնալ. այդ մեծ պարզութեան մէջ:

Չը չփանաս, հեռու փախչես կեղծ գովասանք շոյալողներից. այդ բոլորը քեզ կը փշագնեն, կը մանրացնեն ինչպէս փշացրելու մանրացրել են շատ ու շատ գործիչներին: Քեզ գործիք կը դարձնեն իրենց գողանի փառասիրական ձգտումներին. մտքերում կը ծաղրեն քեզ. իսկ արտաքուստ քեզ զրօշակի տեղ կը ծառայեցնեն...

ՎՍՐԴՕ

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Իզմիրեանց գրական մրցանակաբաշխութիւնը յետաձգուել է, որովհետեւ յանձնաժողովը վերջին պահուն նկատել է թէ կատարել մէջ տրամադրութիւն մը կայ, որ երկու սարին անգամ մը տեղի ունենայ այդ մրցանակաբաշխութիւնը, և թէ մինչեւ հիմա 10 — 15 տարիներէ ի վեր ամէն տարի տեղի ունենալով աններկի շնորհմը և խոշոր սխալ մը գործած է, ուստի որոշել է ասկէ վերջն ալ երկու տարին անգամ մը կատարել:

— Սերասացի Յովհաննէս Թորիկեան, տեղական ազգային վարժարանի նախկին տնօրէն, իր կնոջը և քանի մը Տիվրիկցի ընկերներու հետ բողոքականութիւն ընդունել է յայտարարելով թէ վերջին քանի մը ամիսներու մէջ համոզուել է որ «ուղղափառութիւնը» բողոքականութեան մէջ է:

— Զմիրուհի մէջ գտնուած Մխիթարեան վարժարանը փակուել է. յիշեալ վարժարանը իր նախկին փայլուն վիճակը վաղուց կորսնցուցած է եղեր. հիմա միայն փոքրիկ մանկապարտէզ մը կը մնայ տեղւոյն Մխիթարեանց հակոյութեան տակ:

— Պոլսոյ թերթերը կը հազորդեն թէ կաթողիկոսը պատկերազարդ Աստուածաշունչի տպագրութեան գործը յառաջ տանելու համար, բանասէր Կորայր Բիւզանդացին էջմիածին հրատարակած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանը ծովային նախարարին հրամայել է անմիջապէս սկսիլ ուսումնասիրել Օսմանեան նաւատորմի վերանորոգութեան համար Ամերիկացի ինժեների մը պատրաստած ծրագիրը:

— Նիւ-Եօրթի թիւրք հիւպատոսը որ Լահէ կը գտնուի Բ. Դրան յայտարարած է թէ ինք գրամական նեղ վիճակի մէջ կը գտնուի, կամ իրեն դրամ պէտք է տրուի և կամ թէ արտօնուի լրագիր հրատարակել:

Թ Ո Ւ Ս Ի Ս

Դեռ ամիս մը առաջ Չարսկօէ Սէլօի մէջ ձարին դէմ դաւադրութեան հետքը գտնուած էր. հիմա ալ նոր դաւադրութեան մը մասին Լօնտօնէն կը հեռագրեն Կ. Ֆ. Բրէսսի հետեւեալը.

«Օտեսայէն «Թայմզ» և «Տէլիթ» թէլեգրաֆի կը գրեն ձարին դէմ սարքուած դաւադրութեան մը մանրամասնութիւնները որու

հետքը բոլորովին պիտուածով գտնուած է:

Լօզովա-Սեփաստաբօլեան երկաթուղին գծին վրայ, որով ձարը Սպարի ճամբորդութենէն Լիվաթիա պիտի անցնէր, շատ մը թունէլներ կան, որոնց վերջինը մօտ 1600 մէթր է: Սեփաստաբօլի կողմը կը գտնուի ձուլածոյ ջրի խողովակ մը՝ թունէլը խոնաւութենէ ազատ պահելու համար: Արքայական զոյգի հասնելէն 14 օր առաջ, երբ անոնց ճամբան հսկող զինուորները դեռ զետեղուած չէին, կը նշմարուի երիտասարդ մը, որ գրեթէ ամէն օր թունէլի և ջուրի խողովակին քովը գետինը կը փորէ եղեր. կը հասկցուի թէ տղան Սօքրօփի համալսարանի ուսանողներէն և Սեփաստաբօլեան տեղական նաւու մը հրամանատարի որդին է: Սկիզբը տեսնողները կը կարծեն թէ երիտասարդը ձուլ որսալու որդ կը փնտռէ և ուշագրութիւն չեն դարձներ, սակայն ուսանողին այդ ընթացքին վրայ եղած տարաձայնութիւնները ոտտիկանապետին մէջ կասկած կը յարուցանեն և վերջինս քանի մը ոտտիկաններով կերթայ ուսանողի փորած տեղը. ոտտիկաններու երեւնալուն պէս՝ ուսանողը ձեռքէն թիւն կը նետէ ու կը փայտի, ոտտիկան մը կը հետապնդէ և կը ձերբակալէ ուսանողը. կը խուզարկեն ջրի խողովակը և կը տեսնեն որ մէջը փորուած է և պայթուցիկ նիւթերով լցուած թունէլին երկայնութեամբ: Հետեւեալ օրը այդ նիւթերու պայթումն փորձը կը նեն Սեփաստաբօլի քովերը դատական և ոտտիկանական պաշտօնեաներու ներկայութեան, և պայթումը սարսափելի կըլլայ:

Մասնապէտները կը հաստատեն որ եթէ այդ գաւադրութիւնը յաջողէր, ոչ միայն կայսերական շողեկաւոր այլ և ամբողջ թունէլը պիտի խորտակուէր:

Այս պատճառաւ խուզարկութիւններ եղած են Հարաւային Ռուսիա և Մոսկուա ու բազմաթիւ մարզիկ բանտարկուիչ են:

Հումպէրթօ թագաւորը սպաննողին գատափառութեան ատենները հաստատուեցաւ թէ միջազգային անիշխանականները վրձնած էին գերմանական կայսրը և ռուսիոյ ձարը՝ սպաննել, բայց չէին կրցած գտնել վճռին իրագործման թուականը:

Արդեօք այս գաւադրութիւնը առնչութիւն ունի օտար անիշխանականներու տուած վճռին հետ, ինչ որ տարակուսելի է, թէ՞ լոկ ուսուական է:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Իրլանտիոյ մայրաքաղաքը Տուպլին՝ նախագահ Քրիւկէրը պատուար քաղաքացի ընտրած է և այդ առթիւ ուղերձ մը պիտի յանձն

նուի ծերունի նախագահին որին բովանդակութիւնը մտաւորապէս հետեւեալն է.

Մեծյարգ նախագահ, ձեր ներկայութիւնը Հոլանտիոյ մէջ առիթ չուտայ ամբողջ Եւրոպային իր խորին յարգանքները մատուցանել ձեր երկու հասարակապետութիւններուն իրենց ազատութեան համար մղած հերոսական կռիւին համար: Մեր հայրենիքը Իրլանտեան ժողովրդի ձայներու մեծամասնութեամբ կը միանայ այն հիացմանը, զոր ձեզ կը յայտնէ ամբողջ աշխարհը: Մենք կը ներկայացնենք ձեզ ամբողջ Իրլանտեան զգացմունքները, որուն իբր պայցոյց կրնայ ծառայել այն որ Իրլանտեան ընտրած է 82 երեսփոխան թշնամի Անգլիոյ նախարարութեան որոնք պատճառն են ձեր երկրին դէմ մղած պատերազմին: Ճիշդ է որ շատ մը Իրլանտացիներ, մեծ ամօթ մեզ, ձեզի ճնշողներու հետ ձեզ դէմ կը կռուին, բայց պէտք է հաւատալ որ այդ Իրլանտացիները սկսած միջոցներու գիտակցութիւնը չունէին կոռուի պտտութեանը վրայ:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

«Հաւաստի գործակալութեան զը հազորդեն Բէքինէն որ Լիւնդօն-Չանկ և իշխան Յին նօթայով մը յայտարարած են դեպքաններուն թէ մեղաւորները պիտի պատժուին, իրենք սկզբունքով կը ընդունին կործանուած գետապանատուններու փոխարէնի վճարումը և կը պնդեն որ թշնամութիւններուն վերջ մը տրուի: Կը պահանջեն տեսակցութիւն մը Յունկ Լիւնդօնի մէջ:

Փրանսական դեսպանը այդ նօթային պատասխանած է թէ մինչեւ որ յանցարոններու գրուելները չը կտրուի թշնամութիւնները չի պիտի դադարին:

— Չինացոց կայսրը ձաբոնի Միկաթօնի նամակ մը գրած էր որով զայն կը հրաւիրէր իր ազգացիութիւնը գործ գնել Եւրոպական պետութիւններու առջեւ խաղաղութիւնը վերականգնելու Արևելեան Ասիոյ մէջ statu quo պահպանելու համար: Միկաթօն այդ նամակին պատասխանած է ըսելով—Եթէ իսկապէս կայսրը խաղաղութիւն կը ցանկայ, թող շտապէ բոլոր յետագէմ պաշտօնեաները արտաքսել զանոնք փոխարինել ազատամիտներով. յետոյ թող վերագառնայ Բէքին որպէս զի թէ հասարակաց կարծիքը խաղաղի և թէ անժխտելի կերպով ապացուցանէ որ ինք շատ վշտացած է պետութիւններու դէմ գործուած յանցանքներու համար:

— Գերմանիոյ և Անգլիոյ միջև գաշնագրութիւն կայացած է, ըստ որում երկու պետութիւնները միասին պիտի ջանան Չինի

ամբողջութիւնը պահպանել և բոլոր ազգերու վաճառականական նաւերը ազատ մուտք ունենան Չինական բոլոր նաւահանգիստներու մէջ: Եւ յետոյ եթէ ուրիշ պետութիւն մը օգտուի ուղէ Չինական խառնակութիւններէն և ձգտի մտնել տիրապետել, իրենք միասին պէտք է իրենց շահերը պաշտպանեն: Այդ համաձայնութիւնը պէտք է հաստատուի և միւս պետութիւններուն, որոնք նոյնպէս պիտի հրաւիրուին մասնակցելու, եթէ հաճին: — Մարեշալ Վարտեղէ Բէքինի մէջ յայտարարած է որ պատերազմը արդէն վերջացած կարելի է համարել և ինք գուցէ շուտով կտ կանչուի:

ՏՈՔԹ. Ս. ԹԱՄԱՌԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ իր հիւանդութենէն ապաքինած ըլլալով, այսուհետեւ հիւանդ պիտի ընդունի Չար-Պօրիս Պօրածիֆֆին զիջարանին քովը թիւ 37 սուներ:

Կը դարմանէ մասնաւորապէս գաղական արտի և միզանքարաբքման, նաեւ ամէն տեսակ հիւանդութիւններ, առաւանները ժամը 9—12, կէս օրէն վերջը 2—5:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՍՁԻ

Ի նպատակ ազգային երկսեռ վարժարանոց կազմակերպուած վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի, 15 հոկտեմբեր, յետ աւարտման Ս. Եկեղեցոյ:

Հոգաբարձութիւնս այս առթիւ կրկին կոչում կընէ արգոյ ազգայնոց որ փութան գնել այդ տոմսակներէն, որոնցմէ գոյացեալ հասոյթը յատկացեալ է բազմաթիւ որր եւ ազգատղայոց կրթութեան:

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգային Երկսեռ վարժարանաց Վ. Ատենադպրի Ատենապետ Կ. Կիւպիսիւրեան Յ. Մ. Թովմասեան վասնա, 9 Հոկտեմբեր

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

«Վէսէլլօ» հայ գերասանական խմբին կողմանէ պիտի ներկայացուի այս գիշեր ժամը 9ին, «Խղճի խայթը կամ քան հազար Ֆրանքոնց մուրհակ մը» բարոյալից տրամագումէտի 4 արար:

Վաղը, կիրակի գիշեր պիտի ներկայացնեն «Տղու գողը կամ ներկարարին աղջիկը» խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն 3 արար:

Այս գիշեր Մատամ Մարիի խմբին կողմանէ պիտի ներկայացուի խիստ ծիծաղաշարժ բանտօմիմ մը 2 արար:

Վաղը, կիրակի գիշեր պիտի ներկայացնեն դարձեալ շքեղ տեսարաններով 2 արար եղերերգութիւն:

Երգ և պար Տիկին և Օրիորդ Բասկառէլլօի կողմանէ: